կարող ենք դուրս գալ միայն ազգովի միաբան, քաղաքական ու հոգևոր իշխանությունների սերտ համագործակցությամբ»:

Այնուհետև Վեհափառն անդրադարձավ Եկեղեցու և պետության միջև կնքված «Մտադրությունների հուշագրին» և այնտեղ առկա մշակութային, կրթական և այլ կարևոր հարցերին: Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը առանձնապես կարևորեց մտավորականությանը վերապահված դերը ազգային կյանքում, մեր հայրենիքի ու ժողովրդի համար ծանր ու բարդ այս ժամանակահատվածում:

Վարչապետն իր կողմից հավաստիացրեց, որ ըստ ամենայնի պիտի նպաստի Եկեղեցի-պետություն համագործակցությանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ՄԵԶ ՀԱՄԱՐ ՏԱՃԱՐԻ ԸՆԿԱԼՈՒՄ ՈՒՆԻ»

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՆՎԻՐԵՑ 12-ՐԴ ԴԱՐԻ ԱՎԵՏԱՐԱՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 22 մայիսի 2000 թ.:

Մայիսի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր անդրանիկ այցը կատարեց Մատենադարան:

«Երբ մուտք ես գործում Մատենադարան, ակամայից ձեռքդ շարժվում է դեպի ճակատդ, որպեսզի խաչակնքես, քանզի Մատենադարանը մեզ համար տաճարի և սրբության ընկալում ունի»: Հայոց Հայրապետները միշտ էլ սերտ կապեր են պահպանել Մատենադարանի հետ և զորակցել գիտական այս հաստատությանը՝ հարստացնելով ու լրացնելով այն նոր ձեռագիր մատյաններով, նպաստելով դրանց պահպանման ու հրատարակման աշխատանքներին:

Այս անգամ էլ, իբրև անդրանիկ այցի հիշատակ, Նորին Սրբությունը հայոց ձեռագրերի գանձատանը հանձնեց 12-րդ դարի ձեռագիր մի Ավետարան՝ հավաստելով, որ կարողությունների և հնարավորությունների սահմաններում մշտապես սատարելու է Մատենադարանին:

Թանկարժեք նվերի համար շնորհակալություն հայտնելով՝ պրն Արևշատյանն իր հերթին Վեհափառ Հայրապետին նվիրեց «Վազգեն Վեհափառի Ավետարանը»՝ երջանկահիշատակ Հայրապետի կողմից Մատենադարանին նվիրած 10-րդ դարի հայոց հնագույն Ավետարաններից մեկի նմանատիպ հրատարակությունը, որը նվիրված է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին: